ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 350
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքը (Մեծամոր բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ (Արաքս համայնքի (Մեծամոր բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ *ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքը (Մեծամոր բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արմավիր-7 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը*՝

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
04-064-0101- կադաստրային ծածկագրով 0.0675 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահող	04-064-0101- կադաստրային ծածկագրով 0.0675 հա մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով՝ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից նշված պահանջը (կցվում է):

4. ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Մեծամոր բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Մեծամոր բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝	
	Ե. Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝	
	Լ. Առաքելյան

Երևան, «22» «հոկտեմբերի» 2025 թ.